TURK – TATAR REBELS IN NOR BAYAZET IN 1918- 1920

H. M. Harutyunyan

After independence Azerbaijan became more persistent in pursuing the aim of binding Armenia to its territory. In order to carry out this plan, they made the population to struggle against legal authorities. The region where riots mostly took part was Basargechar in Nor Bayazet. The reason was that it bordered Azerbaijan and was constantly under pressure by Moslem, overwhelming majority being Moslem.

Due to resolute actions and measures taken by Armenian authorities it became possible to restain armed riots.

ԶԵՄՍՏՎՈՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1917-1920 ԹԹ.

Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԳՊՀ պատմության ամբիոնի վարիչ

Հետփետրվարյան Ռուսաստանում ազգային և վարչատարածքային բաժանումների հարցի լուծումն անմիջականորեն կապվում էր տեղական ինքնակառավարման մարմինների՝ զեմստվոների ստեղծման գործընթացի հետ:[1] Սա վերաբերում է և Անդրկովկասին: Փաստաթղթերից մեկում կարդում ենք. «... պատահական կամ դիտավորյալ սահմանաբաժանման անհարմարությունները շուտով աչքի ընկան, մանավանդ, երբ ծագեց հարց Անդրկովկասում զեմստվոյական հիմնարկություններ մտցնելու մասին»:[2] Տեղին է նշել, որ Անդրկովկասում զեմստվոներ մտցնելու խնդիրը լայն կերպով հրապարակ եկավ դեռ 1905թ. հեղափոխությունից հետո, երբ ժողովուրդը հնարավորություն ստացավ կյանքի կոչել այնպիսի հիմնարկություններ, որոնք հասարակության լայն խավերին դնում էին ինքնագործունեության կազմակերպման ճանապարհի վրա: Երկրամասում զեմստվոներ հիմնելու հարցը բարձացվել է նաև 1909թ. զեմստվոյական խորհրդակցությունում: Սակայն երկար ու ձիգ տարիներ Անդրկովկասի ժողովուրդների հետևողական ձգտումը՝ երկրամասում ունենալ զեմստվո, մշտապես հանդիպում էր հին վարչակարգի կոշտ դիմադրությանը: Բանն այն է, որ ցարա-

---

[1] ***Վ. Մելիքյան,*** 1917թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917թ. մարտ-հոկտեմբեր), Երևան, 1997, էջ 117:

[2] «Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.)» փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2004, էջ 196:

կան կառավարությունը բյուրոկրատական հիմնարկություններից դուրս ոչինչ չէր ուզում ճանաչել, և զեմստվոն՝ որպես հասարակական ինքնագործունեության հիմնարկություն, անհանդուրժելի էր բռնապետությանը: Բայցևայնպես, ցարական վարչակարգը, ամենամեծ ցանկության դեպքում անգամ, չէր կարող կառչած մնալ հին ռեժիմի կարծրատիպից և հաշվի չնստել վիթխարի զանգվածների հեղափոխական տրամադրության հետ: Առաջնային ու հրատապ նշանակություն ստացավ զեմստվոներից զրկված ազգային շրջաններում այդ մարմինների ստեղծման հարցը: Խոսքը վերաբերում է և Անդրկովկասին ու Հայաստանին: Անդրկովկասում զեմստվոյական ինստիտուտ հիմնելու հարցին 1916թ. փետրվարի վերջերին անդրադարձել է Պետական դումային կից գործող համապատասխան հանձնաժողովը և որոշել երկրամասում օրենսդրական կարգով զեմստվոներ մտցնելու առաջարկություն ներկայացնել:[3]

Պետական Դումայի մարտի 17-ի նիստում Շիդլովսկին զեկուցում է տեղական ինքնավարության հանձնաժողովի եզրակացությունը Անդրկովկասում զեմստվոներ մտցնելու խնդրի մասին, շեշտելով, որ այդ խնդիրը հասունացած է, անհրաժեշտ և անհետաձգելի: Զեկուցողը դա բացատրում է հետևյալ կերպ. ներկա պատերազմի ընթացքը (Առաջին համաշխարհային-Հ.Հ.) պարզորեն ցույց է տվել, որ թիկունքի կազմակերպման գործը, քանի որ Կովկասը մոտ է ռազմաբեմին, առանձնապես կարևոր է, բայց այդ գործը չի կարող գլուխ գալ առանց զեմստվոյի, որովհետև Կովկասի տնտեսական կյանքն անկարգ և անկազմակերպ վիճակի մեջ է:[4] Փետրվարյան հեղափոխության նախօրեին փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը և Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը Նախարարների խորհուրդ ներկայացրեցին Անդրկովկասում զեմստվոյական ինքնավարության հաստատման մասին նախագիծը:[5]

Փետրվարի 3-ին Պետրոգրադում Կովկասի փոխարքայի փոխանորդ Միլյուտինի նախագահությամբ կայացավ միջվարչական խորհրդակցություն՝ նվիրված զեմստվոների ընտրությունների անցկացման, նրա կազմի ձևավորման և ներկայացուցչության ձևերի կանոնակարգի մշակմանը:

Խորհրդակցությունը ձայների մեծամասնությամբ որոշում է զեմստվոյի ընտրությունները կատարել երեք կուրիաներով (ընտրադասերով)՝ երկրագործական, գյուղացիական և խառն՝ առևտրարդյունաբերական և քաղաքացիների դասից:[6]

Դաշնակցությունն ուներ երկրամասի նահանգներում և գավառներում զեմստվոյական ինքնավարություններ հիմնելու հստակ նախագծեր, որոնց հեղինակը Ավետիս Շահխաթունյանն էր: Այժմ Երևանի նահանգի օրինակով քննության առնենք այդ նախագծերից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

---

[3] Տե՛ս ***Վ. Մելիքյան,*** Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917թ. նոյեմբեր – 1918թ. փետրվար), Երևան, 2010, էջ 126:

[4] «Հորիզոն», 19 մարտի, 1918թ, թիվ 92:

[5] Տե՛ս ***Վ. Մելիքյան***, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում,....., էջ 125:

[6] «Մշակ», 14 փետրվարի 1917, թիվ 32:

Երևանի նահանգի գավառներ[7]

Աղյուսակ 1

Գավառներ	Կալվածատերերի ընտրողների թիվը	Իրավասուների թիվը	Մեկ իրավասուի քանի ընտրող է ընկնում	Գյուղացի ազգաբնակչության թիվը	Գյուղացի ընտրողների թիվը	Գյուղացի իրավասուների թիվը	Մեկ իրավասուի քանի գյուղացի ընտրող է ընկնում
Ալեքսանդրապոլի	2+150	18	3	174251	29041	22	907
Նախիջևանի	164	14	11-12	113603	18934	14	1352
Նոր Բայազետի	19	13	1-2	149986	24998	30	566
Սուրմալուի	72	15	4-5	116013	19335	14	1381
Շարուր-Դարալագյազի	94	20	4-5	99645	16608	14	1186
Երևանի	289	25	12	153051	26341	16	1584
Էջմիածնի	72	31	3-4	162156	27026	16	1689
Ընդամենը	710	118	35-39	968705	162283	126	8665

Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս, որ բացառությամբ Ալեքսանդրապոլի գավառի, ուր չի հաջողվել կազմել կալվածատերերի առանձին ընտրախավ՝ կալվածատերերի դասակարգ չլինելու պատճառով,[8] Երևանի նահանգն ունենալու էր 710 ցենզավոր կալվածատեր, որոնք զեմստվոյի մեջ ունենալու էին 118 իրավասու, ինչը նշանակում է, որ այդ դասից 6 հոգի կունենար մեկ ներկայացուցիչ զեմստվոյի մեջ:

Գյուղացիությունը 162283 ընտրողից զեմստվոներում կունենար 126 իրավասու: Այսինքն՝ ավելի քան 1287 գյուղացի ընտրողներին հասնում էր մեկ ներկայացուցիչ: Նոր Բայազետի գավառում 19 ցենզավոր կալվածատերեր զեմստվոներում զբաղեցնելու էին 13 տեղ, որը կազմում էր այդ ընտրախավի ընտրողների ընդհանուր թվի 68,4%-ը, իսկ գյուղացի իրավասուների թվաքանակը կազմելու էր 30 մարդ կամ գյուղացի ընտրողների քանակի 0,12%-ը: Ուստի բոլոր գավառամասերում, հետևաբար և ամբողջ նահանգում, կալվածատերերի ներկայացուցիչները թե՛ միասին և թե՛ առանձին վերցրած ունենալու էին բացարձակ մեծամասնություն:

[7] Տե՛ս «Հորիզոն», 5 փետրվարի 1917, թիվ 27:

[8] Տե՛ս նույն տեղում, 5 փետրվարի 1917, թիվ 27, 8 փետրվարի 1917, թիվ 29:

Անդրկովկասի զեմստվոյի օրինագիծ[9] (ըստ զեմստվոյական հարկի՝ ռուբլիներով)

Աղյուսակ 2

Գավառներ	Կալվածատերերի ընտրախավը վճարում է տուրք	Կալվածատերերն ունեն իրավասու	Գյուղական հասարակությունը վճարում է և զեմստվային հարկ	Գյուղացիներն ունեն իրավասուներ	Ամեն մի կալվածատերի իրավասու ընկնում է	Ամեն մի գյուղացու իրավասու ընկնում է
Նախիջևանի	10000	23	78000	14	434	5628
Նոր Բայազետի	3100	13	42800	30	238	1426
Սուրմալուի	1900	15	75200	14	126	5371
Շարուր-Դարալագյազի	3500	20	49300	14	175	3521
Էջմիածնի	2500	21	130100	16	119	8131
Ընդամենը	21000	92	375400	88	228	4265

Աղյուսակ 2-ից հետևում է, որ Երևանի նահանգի 5 գավառներում[10] կալվածատերերը (առաջին ընտրախավ) 21 հազ. ռուբլի զեմստվոյկան տուրք վճարելու դեպքում գավառական զեմստվոների ժողովներում ունենալու էին 92 ներկայացուցիչ, այսինքն՝ ամեն մի ներկայացուցչի ընկնում էր ավելի քան 228 ռ.: Առևտրաարդյունաբերական դասը (երկրորդ ընտրախավ) թեև կալվածատերերի համեմատությամբ վճարելու էր բավականին բարձր զեմստվոյական հարկ (ընդհանուր գումարով 27900 ռ.), բայց զեմստվոյական ժողովներում ունենալու էր ընդամենը 36 ձայն[11] կամ 2,5 անգամ պակաս, քան կալվածատերերինը:

Սակայն դա չի նշանակում, որ նախագծի հեղինակներն իրենց որոշումները կայացնելիս առաջնորդվել են երկրորդ դասի շահերն անտեսելով: Բոլորովին, առևտրաարդյունաբերական դասը ևս, կալվածատերերի նման, ներկայացված էր ինքնակամ և վճարված հարկի քանակից անկախ: Ինչ վերաբերում է գյուղացիությանը, ապա այդ ընտրախավը վճարելու էր զեմստվոյական հարկ մոտ 18 անգամ ավելի, քան կալվածատերերը և 13,5 անգամ շատ առևտրաարդյունաբերողներից, բայց ստանալու էր 88 ձայն: Փաստորեն գյուղացիության յուրաքանչյուր իրավասուի ընկնում էր 4265 ռ., որը կալվածատերերի և առևտրաարդյունաբերողների վճարումներին գերազանցում էր համապատասխանաբար 18,6 և 13,5 անգամ:[12]

Նոր Բայազետի գավառում գյուղացիությունը 30 իրավասուներ ունենալու համար պետք է վճարեր 42780 ռ. զեմստվոյական հարկ, այն դեպքում, երբ կալ-

[9] Տե՛ս «Հորիզոն», 8 փետրվարի 1917, թիվ 29:

[10] Երևանի գավառը չի ընդգրկվել՝ եղած տվյալների թերի լինելու պատճառով, իսկ Ալեքսանդրապոլի գավառի վերաբերյալ արդեն ասվել է: Տե՛ս «Հորիզոն», 5 փետրվարի 1917, թիվ 27,8 փետրվարի 1917, թիվ 29:

[11] Տե՛ս «Հորիզոն», 8 փետրվարի 1917, թիվ 29, 24 փետրվարի 1917, թիվ 40:

[12] Տե՛ս «Հորիզոն», 8 փետրվարի 1917, թիվ 29, 24 փետրվարի 1917, թիվ 40:

վածատերերից 13 տեղեր զբաղեցնելու համար պահանջվում էր մոտ 3100 ռ. զեմստվոյական հարկ:

Այսպիսով՝ եթե ամեն մի ընտրախավի վճարած գումարը բաժանենք իր ունեցած ներկայացուցիչների թվի վրա, կստանանք, որ Նոր Բայազետի գավառում կալվածատերերի ամեն մի ձայնավորի վրա ընկնում է 238 ռ. զեմստվոյական հարկ, առևտրաարդյունաբերողներին՝ 195 ռ., իսկ գյուղացիությանը՝ 1426 ռ., այսինքն՝ համապատասխանաբար 6 և 7,3 անգամ ավել:

Հավելենք, որ առաջին և երկրորդ ընտրախավերը, ձեռք բերելով իրավասուների տեղերի շուրջ 69%-ը, գավառական զեմստվոների ժողովներում ստանում էին ձայների նույնքան տոկոսը՝ անկախ իրենց վճարած զեմստվոյական հարկի չափից:

Այժմ քննության առնենք օրինագիծն ըստ զեմստվոյական տուրքի: Հենց սկզբից նշենք, որ տուրքային սկզբունքը քաղաքական առումով անընդունելի էր օրինագծի հեղինակների համար, քանզի այդ դեպքում ձայների բաժանումն ըստ ընտրախավերի կտար բոլորովին ոչ ցանկալի արդյունք: Թե ինչ արդյունք կստացվեր տուրքային սկզբունքի գործառությունից, ցույց տանք Երևանի նահանգի օրինակով, որը պատկերված է ստորև բերված աղյուսակում:[13]

Անդրկովկասի զեմստվոյի օրինագիծ (ըստ զեմստվոյական տուրքի)

Աղյուսակ 3

Գավառներ	Կալվածատերերն ունեցիր իրավասու	Պիտի ունենային իրավասու	Գյուղացիներն ունեցիր իրավասուներ	Պիտի ունենային իրավասուներ	Առևտրաարդյունաբերողներն ունեցիր իրավասուներ	Պիտի ունենային իրավասուներ
Նախիջևանի	23	5	14	36	5	1
Նոր-Բայազետի	13	3	30	42	3	1
Սուրմալուի	15	1	14	40	13	1
Շարուր-Դարալագյազի	20	2	14	37	6	1
Էջմիածնի	21	1	16	44	9	1
Ընդամենը	92	12	88	199	36	5

Աղյուսակից բխում է, որ տուրքային սկզբունքի կիրառումով զեմստվոներում գյուղական ընտրախավը կստանար ձայների մեծամասնությունը, ինչը նշանակում է, որ ունևոր դասակարգերը, առավելապես առևտրաարդյունաբերողների դասը, ստիպված պիտի լինեին զիջել գյուղացիությանը զգալի տեղեր: Ըստ այդմ, ամբողջ Երևանի նահանգում գյուղական հասարակությունները կունենային 199 իրավասուներ՝ 88-ի փոխարեն, կալվածատերերի դասը՝ 12՝ 92-ի դիմաց, իսկ առևտրաարդյունաբերողներինը՝ 36-ի փոխարեն 5-ը: Այսինքն՝ գյուղական իրավասուների ձայները ավելանալու էր 2,3 անգամ, իսկ բարձր դասինը՝ կրճատվելու էր, ըստ հերթականության 7,6 և 7,2 անգամ:

Ինչ վերաբերում է Նոր Բայազետի գավառի սոցիալական տարբեր խմբերի կողմից զեմստվոյական վճարված տուրքին համապատասխան ինքնավարու-

[13] «Հորիզոն», 24 փետրվարի 1917, թիվ 40:

թյան մարմիններում ձայներ ունենալուն, ապա ըստ աղյուսակի տվյալների կալվածատերերը կորցնում էին 10 ձայն, առևտրաարդյունաբերողները՝ 2, իսկ գյուղացիներինը ավելանում էր 12 ձայնով:

Հարց է առաջանում, արդյո՞ք հեղինակների քաղաքական գիծը օրինագծում նախագծվում էր (կամ ենթադրվում էր կիրառել) ընդհանրապես տեղական բարձր դասի շահերի անտեսումով, եթե այո, ապա հետաքրքիր է իմանալ, իսկ ի՞նչ նպատակ էր հետապնդում այդ օրինագիծը:

Վերլուծելով հարցին վերաբերող փաստերը,՝ հատկապես այն, որ օրինագծի հեղինակներն ամբողջովին չեն անտեսել տուրքային համամասնության սկզբունքը, կարելի է վստահաբար ասել, որ այն ավելի շեշտված ձևով հաստատում էր բարձր դասի արտոնությունները և միտում ուներ հնարավորինս վերահսկելի և կառավարելի դարձնել գավառական ու նահանգային զեմստվոների ստեղծման գործընթացը: Այլ խոսքով՝ օրինագիծը դեմ չէր տուրքային սկզբունքին: Այնտեղ, ուր տուրքային հարաբերականը կարող էր թուլացնել կալվածատերերի արտոնյալ դրությունը և ուժեղացնել գյուղացիության ներկայացուցչությունը, այնտեղ մերժվում էր տուրքային սկզբունքը: Այսպիսով՝ վերը ասվածից հետևում է, որ այնտեղ, ուր տուրքային հարաբերականը կարող էր սասանել բարձր դասակարգի դիքերը և ստվարացնել ու ուժեղացնել գյուղացիության ներկայացուցչությունը ինքնավարության մարմիններում, այնտեղ չէր գործելու այդ սկզբունքը: Վեջինս ընդունելի էր համարվում, երբ դրա շնորհիվ կարելի էր ապահովել ունևոր դասակարգերի, առավելապես կալվածատերերի մեծ թվով տեղերը նահանգային զեմստվոյի մեջ: Այսպես, Երևանի նահանգական զեմստվոյական ժողովում ներկայացուցչությունը ոչ թե ինքնակամ էր, այլ «օրինական»: Այստեղ ներկայացուցչությունը համապատասխանում էր զեմստվոյական վճարած տուրքի քանակին և ոչ թե ազգաբնակչության թվին,[14] որը ցույց է տրված ներքոհիշյալ աղյուսակում:[15]

Աղյուսակ 4

Գավառներ	Ազգաբնակչության թիվը (հազ.)	Զեմստվոյական տուրքի քանակը	Զեմստվոյական իրավասուների թիվը նահանգական զեմստվային ժողովում
Ալեքսանդրապոլի	225	63700	6
Նախիջևանի	130	90400	8
Նոր Բայազետի	163	46400	4
Սուրմալուի	116	78900	7
Շարուր-Դարալագյազի	100	53800	5
Երևանի	188	106300	10
Էջմիածնի	162	133800	10

[14] «Հորիզոն», 24 փետրվարի 1917, թիվ 40:

[15] Տե՛ս նույն տեղում:

Այս տեսակետից փորձենք ցույց տալ այն հիմնական հավակնորդներին, որոնք կարող էին լինել ապագա զեմստվոյական քարտեզի գույները՝ կալվածատերեր, առևտրաարդյունաբերողներ և գյուղացիներ:

Այս շրջանակում էր տեղի ունենալու ընտրություն-մրցակցություն պայքարը: Այստեղ, ըստ աղյուսակի տվյալների, միարժեքը թերևս այն է, որ այս դեպքում կալվածատերերին ձեռնտու էր զեմստվոյական վճարված տուրքին համապատասխան ներկայացուցչության սկզբունքի կիրարկումը: Ինչպես արդեն նկատել ենք, Երևանի նահանգում կալվածատերերի համար արհեստական գերակշռություն էր ստեղծվելու զեմստվոյական ժողովներում, հենց նշված հինգ գավառներում, ուր ազգաբնակչությունը (իհարկե ոչ թե կալվածատերերը) ավելի շատ տուրք էր վճարում: Նոր Բայազետի գավառի պարագայում, ուր կալվածատիրությունը թույլ էր, առավել ևս չկար որևէ հիմք հրաժարվելու տուրքային սկզբունքի գործադրումից, գավառային ժողովից նահանգականի ներկայացուցչության նկատմամբ, նույնիսկ ընդհակառակը: Այդ ճանապարհով գյուղացիական գավառներին կարելի էր մերժել ազգաբնակչության թվի համապատասխան ներկայացուցչությունը: Հետևաբար, նահանգային և գավառային զեմստվոներում ձայներ ստանալու հարցում ընտրախավերը ավելի շատ ապավինելու էին ոչ այնքան թվական մեծամասնությանը, որքան արտոնյալ պայմաններին:

Դիտարկենք զեմստվոյական իրավասուների բաժանումը ընտրախավերի մեջ ըստ հողատարածությունների, որոնք գտնվում էին առաջին և երրորդ ընտրախավերի տրամադրության տակ:

Անդրկովկասյան զեմստվոյի օրինագիծն ըստ հողատարածության[16]

Աղյուսակ 5

Գավառներ	Կալվածատերերն ունեին դես. հող	Ունեին իրավասու գավառային զեմստվայի ժողովներում	Պիտի ունենային ըստ մեծամասնության եզրակացության	Գյուղացիներն ունեին դես. հող	Ունեին իրավասու գավառային զեմստվային ժողովներում	Պիտի ունենային ըստ մեծամասնության եզրակացության
Նախիջևանի	23936	23	4	224423	14	33
Նոր-Բայազետի	18389	13	3	210160	30	40
Սուրմալուի	9223	15	1	191361	14	28
Շարուր-Դարալագյազի	17020	20	4	128924	14	36
Էջմիածնի	4721	21	1	105170	16	167
Գումարը	73289	92	13	860038	88	304

Աղյուսակի և այլ վիճակագրական տվյալների հիման վրա քննության առնենք կալվածատերերի և գյուղացիության հողերի քանակը, նրանց իրավասուների թիվը ըստ օրինագծի և իրավասուների այն թիվը, որ ցանկանում էին ստանալ շրջանային խորհրդակցության մեծամասնականները:

Եվ այսպես՝ Երևանի նահանգի այս հինգ գավառների առաջին և երրորդ ընտրախավերի հողերի քանակը կազմել է համապատասխանաբար 73289 և 860038 դես.: Նրանց իրավասուների թիվը ըստ 3 և 4 աղյուսակների տվյալների

[16] Տե՛ս «Հորիզոն», 2 մարտի 1917, թիվ 45:

պետք է լիներ համապատասխանաբար 92 և 88: Իսկ իրավասուների այն թիվը, որ ցանկանում էին ստանալ շրջանային խորհրդակցության մեծամասնականները, առաջին դասի (710 ընտրող կալվածատերերի) համար նախատեսում էին 13, իսկ երրորդ դասին (գյուղացիությանը)՝ 304 տեղ: Այսինքն՝առաջին դասի իրավասուների թիվը գավառային զեմստվոյական ժողովներում կրճատվելու էր 79 տեղով, իսկ երրորդ դասինը ավելանալու էր 216 տեղով: Սա նշանակում էր, որ բարձր դասի մոտ 55 շնչին ընկնում էր մեկ ներկայացուցիչ, իսկ գյուղացիներին՝ շուրջ 534 ընտրողին՝ մեկ ձայն զեմստվոյի մեջ: Թիվ 1 և 5 աղյուսակների տվյալների համաձայն՝ Նոր Բայազետի գավառում այդ թիվը կազմել է համապատասխանաբար՝ 55 և 82:

Ապագա զեմստվոների կոնֆիգուրացիան կանխատեսելիս օրինագծի հեղինակները համաձայն չէին այդ համամասնության հետ՝ համարելով, որ դա ամենևին չի նշանակում, որ այդ բովանդակությունը կլինի ավելի լավը, պետության և հասարակության շահերի տեսանկյունից՝ առավել ընդունելի:

Հանրագումարի բերելով օրինագծի վերը նշված տարբերակները՝ կարելի է նշել, որ Երևանի նահանգում ստեղծվելու էր երեք ընտրախավ՝ կալվածատերերի, առևտրաարդյունաբերողների և գյուղացիների: Արտահայտելով իշխանությունների և տիրող դասակարգերի կամքն ու պահանջը՝ օրինագծի հեղինակները ձգտում էին այնպիսի պայմաններ ստեղծել, որոնք հասարակության մեջ, անկախ կալվածատերերի և առևտրաարդյունաբերողների թվաքանակից, նրանց համար ապահովվեր առավելագույն տեղեր զեմստվոներում: Ահա թե որն էր կուրիաներ (ընտրախավեր) ստեղծելու իշխանությունների նպատակը:

Այս օրինագծերը, թեև հավասարապես չէին արտահայտում բնակչության բոլոր շերտերի շահերն ու հետաքրքրությունները, սակայն, ըստ էության, սկզբունքային լուծում էր տրվում զեմստվոներ հիմնելու հարցին: Բայցևայնպես, օրինագծերին վիճակված չէր իրականանալ, քանի դեռ լուծում չէր տրվել երկրամասի վարչական սահմանափոխությունների հարցին, որովհետև, ինչպես արդեն ցույց ենք տվել, զեմստվոներ մտցնելու նախնական պայման էր համարվում վարչական սահմանների փոփոխությունը: Այլ խոսքով ասած՝ զեմստվոների հիմնումը անմիջական առնչություն ուներ երկրամասի վարչատարածքային սահմանափոխության խնդրի լուծման հետ:

Հիմա դառնանք հարցի սկզբին: Անդրկովկասի երկրամասում տեղական ինքնակառավարման մարմիններ հիմնելու հարցը գործողության մեջ դրվեց նաև 1917թ. ամռանը: Նույն թվականի օգոստոսին Պետրոգրադում գործող զեմստվային խորհրդակցությունը Վեսելովսկու նախագահությամբ մշակում է Անդրկովկասյան զեմստվոյի մի նախագիծ և ուղարկում է Անդրկովկասի հատուկ կոմիտեին՝ հայտնելու իր և տեղական քաղաքական և հասարակական շերտերի կարծիքը:[17]

1917թ. ամռանն ու աշնանը Օզակոմի կողմից հրավիրված խորհրդակցություններում հայերի առաջարկին հանդիպակաց՝ վրաց-թաթարական ներկայացուցիչները ներկայացրեցին երկրամասի սահմանափոխության վերաբերյալ իրենց մոտեցումները, ինչի մասին արդեն առիթ ունեցել ենք նշելու:

---

[17] Տե՛ս «Պայքար», 23 օգոստոսի 1917, թիվ 104:

Նման գործելակերպով վրացիները և թաթարները նպատակ էին հետապնդում թույլ չտալ հայերին կյանքի կոչելու երկրամասի սահմանափոխության և այդ հիմքի վրա զեմստվոներ հիմնելու իրենց օրինագծերը՝ զգուշանալով տարածքներ կորցնելուց (մանավանդ, եթե նկատի ունենանք, որ նրանք զավթել էին Արևելյան Հայաստանի տարածքների զգալի մասը և ունեին նոր տարածքային հավակնություններ) և կենտրոնում ու գավառներում ազդեցության թուլացումից: Տեղին է նշել, որ վրաց-թաթարական համագործակցությունը, ի վնաս հայ ժողովրդի և Հայաստանի, շարունակվեց նաև հետագայում: Անշուշտ, նրանց այդ մոտեցումները երբեք ու երբեք բավարար չէին հանրության սպասումների և տիրող մթնոլորտի առումով:

1917թ. սեպտեմբերի 27-ին Թիֆլիսում հրավիրված հայոց ազգային համախորհրդակցության առանցքային խնդիրներից էր զեմստվոների հարցը, որին անդրադարձ կատարվեց հոկտեմբերի 6-ի և 7-ի նիստերում:[18] Պետք է նշել, որ խորհրդակցությունում զեմստվոներին վերաբերող հարցը հայ տարբեր քաղաքական ուժերի կողմից մեկնաբանվում էր Հայաստանի և երկրամասի իրականություններին բնորոշ տեսանկյունից՝ ի հայտ բերելով տարբեր մոտեցումներ ու տեսակետներ, որոնք ի վերջո բյուրեղանում էին մի գաղափարի շուրջը, այն է՝ մինչև որ կլուծվեն վարչատարածքային խնդիրները:

Վկայակոչենք մեր միտքը հաստատող մի քանի օրինակներ: Այսպես, հայոց ազգային համախորհրդակցության 1917թ. հոկտեմբերի 7-ի նիստում Ք. Վերմիշյանը (Հայ ժող. կուսակցություն) հայտարարեց. «Թող կյանքը ապագային վճռի երեք նահանգների միացման հարցը: Պետք է նկատի առնել այսօրվա պահանջները: Զեմստվոյի ռեֆորմը անհետաձգելի է, նա միայն կարող է երկիրը հանել ներկա անիշխանական դրությունից և քայքայման առաջն առնել,- հավելելով, որ,- զեմստվոն է, որ կարող է հաշտություն և ներդաշնակություն առաջ բերել մեր և մահմեդականների մեջ, քանի որ սահմանների բաժանումով ընդհարումների առիթը կվերանա, և յուրաքանչյուր ազգ պարզ կգիտակցի իր դրությունը»:[19] Լ. Աթաբեկյանը (Սոցիալիստ հեղափոխականների կուսակցություն) նույնպես կարծում է, որ նախատեսված սահմանափոխությունը՝ զեմստվոյի անվան տակ, լուծում է ազգային տարածքային խնդիրը և ակնարկում է, որ «զեմստվոյի հարցը կապ ունի հայկական ավտոնոմիայի, թերևս և հայ պետության հետ»:[20] Փաստորեն Լ. Աթաբեկյանը հակված էր կարծելու, որ հայոց պետականության վերականգնումը աղերս ունի զեմստվոների հարցի լուծման հետ:

Ն. Աղբալյանը (դաշնակցական) հոկտեմբերի 2-ի նիստում անդրադառնալով Անդրկովկասում ազգային հարաբերություններին և դրա հետ կապված զեմստվոներ հիմնելու խնդրին, ասում է. «Անդրկովկասը առանձին ազգությունների երկիր է և յուրահատուկ հատկություններ ունի: Ազգերի տրամադրությունները լարված են իրար դեմ, որ պարզ երևաց իմիջիայլոց, զեմստվոյի հարցի քննության ժամանակ»:[21]

---

[18] Տե՛ս «Համահայկական խորհրդակցություններ (1912-1920)», էջ196-201:

[19] Նույն տեղում, էջ 201:

[20] Նույն տեղում:

[21] Նույն տեղում, էջ 181:

Անդկովկասի երկրամասում զեմստվոներ հիմնելու նշանաբանով անցան նաև Օզակոմի մեկը մյուսին հաջորդած 1917թ. հոկտեմբերի 14-15-ի և նոյեմբերի 24-ի խորհրդակցությունները:

Հոկտեմբերի 15-ին խորհրդակցությունը որոշում է հարց բարձրացնել Ռուսաստանի կառավարության առաջ՝ ընդունել հռչակագիր ողջ Անդրկովկասում զեմստվոներ մտցնելու մասին: Նախաձեռնության հեղինակներն առաջարկում էին այն իրականացնել հետևյալ կերպ. անմիջապես ներդնել այն նահանգներում և շրջաններում, որոնք տարածքային վեճեր չունեն, իսկ այդպիսիք լինելու դեպքում, անհրաժեշտ է սահմանաբաժանում անցկացնել և նոր միայն զեմստվո մտցնել: «Այն գործնականում չիրականացավ բոլշևիկյան հեղաշրջման պատճառով»[22],- գրում է Վ. Մելիքյանը:

Քաղաքական նոր իրավիճակում զեմստվոներ հիմնելու հարցին նվիրված խորհրդակցություն հրավիրվեց նոյեմբերի 24-ին: Խորհրդակցությունը որոշում է դիմել Անդրկովկասյան կոմիսարիատին՝ հատուկ դեկրետով ողջ Անդրկովկասի վրա տարածել զեմստվոյական ինքնակառավարում: Կոմիսարիատի ընդունած հռչակագրով սահմանազատում էր մտցվում, այսպես կոչված, «վիճելի» և «անվիճելի» տարածքների միջև:[23]

Ըստ Անդրկովկասյան կոմիսարիատի զեմստվոյի վերաբերյալ դեկրետի (դեկրետը հեղինակել էր Ա. Չխենկելին) վարչական սահմանների առումով անվիճելի են ճանաչվել Բաքվի, Քութաիսի և Սևծովյան նահանգները, Բաթումի, Դաղստանի շրջանները, Սուխումի, Թելավիի, Թիոնեթի, Դուշեթի, Գորիի, Ախլցխայի գավառները, Ելիզավետպոլի նահանգի Արեշի և Նուխիի գավառները և Կարսի շրջանի Արդահանի և Օլթիի օկրուգները: Վիճելի են համարվել Երևանի նահանգը, Ելիզավետպոլի նահանգի Շուշիի, Զանգեզուրի և Կարյագինոյի գավառները, Կարսի շրջանի և Կաղզվանի գավառները և Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները:[24]

Դժվար չէ նկատել, որ վիճելի հիմնականում համարվել են բուն հայկական տարածքները: Այս հռչակագրի նպատակը, կոմիսարիատի տեսակետից, վրացիների և Կովկասի թաթարների դիրքերի ուժեղացումն էր տարածաշրջանում, մյուս կողմից էլ հայ ժողովրդի դե յուրե կամ դե ֆակտո չեզոքացումը՝ որպես այդ տարածքների օրինական սեփականատիրոջ: Հռչակագրի ընդունումից հետո կոմիսարիատի կողմից ստեղծված հատուկ հանձնաժողովը (նախագահ Ն. Կելարև) մշակեց «Անդրկովկասի զեմստվային հաստատությունների ժամանակավոր կանոնադրությունը», որ ընդունվեց 1918թ. հունվարի 25-ին:[25]

Զեմստվոներ հիմնելու սցենարը Անդրկովկասի ներքաղաքական կյանքի համատեքստում գործնական կիրառություն գտավ երկրամասի միայն վրացական և թաթարական շրջաններում, իսկ հայկական տարածքներում ոչ՝ համարվելով որպես վիճելի:

Հայաստանում զեմստվոներ ստեղծվեցին անկախ պետականության հռչա-

---

[22] Տե՛ս ***Վ. Մելիքյան***, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, էջ 133-134:

[23] Տե՛ս նույն տեղում, էջ 134-138:

[24] Նույն տեղում, էջ 137:

[25] Նույն տեղում, էջ 138:

կումից ուղիղ մեկ տարի անց: Հայաստանի Հանրապետության գլխին կախված արտաքին քաղաքական վտանգների և ներքին սոցիալ-տնտեսական ծանր կացության պայմաններում զեմստվոներով զբաղվելը դիտվում էր վաղաժամ երևույթ: Այնուամենայնիվ, չնայած բազմաթիվ դժվարություններին, զեմստվոների հարցը առանձին ուշադրության առարկա էր:

Շարունակվում էր երկրի տնտեսական ծանր դրությունը՝ իրերի օբյեկտիվ բերումով: Երկիրն այդ վիճակից դուրս բերելու հեռանկարն իրավացիորեն կապվում էր նաև տեղական ինքնավարությունների ստեղծման հետ: Այդ է հավաստում կառավարող ՀՅԴ կուսակցության «Աշխատավոր» թերթի մի հրապարակումը. «Եվ միայն ու միայն ժողովրդական լայն խավերի ինքնագործունեությամբ ու ինքնօգնությամբ հնարավոր է ստեղծված անիշխանությունից հաջող կերպով դուրս գալ»: Ըստ դաշնակցության՝ «Տեղական քաղաքական ու գյուղական ինքնավարություններն են կազմում դեմոկրատիկ հանրապետության միակ նեցուկն ու պաշտպանը: Ինքնավարությունը պատմական մեծ դեր ունի կատարելու երկրի շինարարության մեջ, ուստի և Հայաստանի օրենսդիր մարմինը պետք է հրապարակի զեմստվային ու քաղաքային ինքնավարության օրենքն ու հետևի նրա անշեղ ու արագ կիրառմանը կյանքի մեջ»:[26] Որ զեմստվոներ հիմնելու խնդիրը Հայաստանի համար հրատապ նշանակություն ուներ, փաստում էր նաև ՀՅԴ-ին ոչ համակիր ՀԺԿ-ն: «Զեմստվոն խիստ անհրաժեշտ է մտցնել Հայաստանի բոլոր վայրերում,- գրում էր այդ կուսակցության օրգան «Ժողովուրդը»,- և որքան հնարավոր է շուտ»:[27]

1919թ. մայիսի 23-ին ՆԳ նախարարությունը խորհրդարանի հաստատմանը ներկայացրեց «ՀՀ մի քանի գավառներում զեմստվային հաստատություններ հիմնելու մասին» կանոնադրությունը: Չորս կետից բաղկացած այս կանոնադրությունը բովանդակում էր հետևյալ կետերը.

Մինչև Հայաստանի Հանրապետության զեմստվային հաստատությունների մասին հատուկ կանոնադրության (положение) հրատարակելը, անմիջապես կիրառել Երևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Սուրմալուի և Դարալագյազի գավառներում նախկին Անդրկովկասյան կոմիսարիատի 1918թ. հունվարի 5-ին հաստատված Անդրկովկասյան զեմստվային հաստատությունների «Ժամանակավոր պոլոժենիան»՝ լրացումներով և ՀՀ տեղական պայմաններին համաձայնեցրած փոփոխություններով:

Հիշյալ գավառների զեմստվների ձայնավորների ընտրությունները կատարել համաձայն նախկին Ռուսաստանի Հանրապետության ժամանակավոր կառավարության 1917թ. մայիսի 21-ին հաստատված «Նահանգական և գավառական զեմստվային ձայնավորների ընտրության ժամանակավոր կանոնների»՝ ՀՀ տեղական պայմաններին համաձայնեցրած փոփոխություններով:

Ներկա ժամանակավոր կանոնադրությունները ուժի մեջ մտցնելուց հետո, գավառական և շրջանային զեմստվների ձայնավորների առաջին կազմը ընտրվում է երկու տարով:[28] Ընդ որում, Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքները հա-

[26] «Աշխատավոր», 17 հոկտեմբերի 1919, թիվ 218:

[27] «Ժողովուրդ», 25 հոկտեմբերի 1918, թիվ 23:

[28] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 1174, թ. 46, ֆ 275, ց. 5, գ. 79, թ. 137:

մարվեցին ինքնուրույն միավորներ:[29]

Հայաստանում գավառական (զեմստվային) և քաղաքային ինքնավարությունների ընտրությունները անցկացվեցին 1919-1920թթ՝ նախապես ընդունված վերոգրյալ կանոնադրության հիման վրա, բացառությամբ այն շրջանների, որտեղ քաղաքական բարդ իրավիճակ էր:

ПРОЦЕСС СОЗДАНИЯ ЗЕМСТВ В ЗАКАВКАЗЬЕ И ЕРЕВАНЕ В 1917-1920 ГГ.

Г. М. Арутюнян

Статья посвящена созданию земств в Закавказье и Ереване в 1917-1920 гг. Идея создания земств в Закавказье родилась еще после революции 1905 года, когда народ получил возможность создания таких институтов, которые поставили бы широкие слои обшества на путь организации самодеятельности.

3 февраля 1917г. в Петрограде состоялось межадминистративное совещание, на котором большинством голосов было решено осуществить выбор земств по трем категория: земледельческие, рестьянские и смешанные - торгово-промышленные и из класса граждан.

Сценарий основания земств в контексте закавказской внутриполитической жизни нашей страны практическое применение лишь в грузинской и татарской областях края, а на армянских территориях - наобаорот. В Армении земства обосновались ровно через год после провозглашения независимости.

THE PROCESS OF ESTABLISHING LOCAL AUTHORITIES "ZEMSTVO" IN THE REGIONS OF ANDRKOVKAS AND YEREVAN FROM 1917 TO 1920

H. M. Harutyunyan

The solution of the problem concerning to the national and administrative divisions in Russia was directiy connected with the establishment of local authorities ie "zemstvo".

It mainly concerns to Andrkovkas. The issue of establishing self government institutions was being widely discussed after the reforms in 1905, when people had ad opportunity to create institutions that would lead to organized self – operations.

On february 3, 1917 an administrative consultation took plase in Petrograd devoted to the elections of self goverment institutyn that would be of different social classes.

Dashnaktutyn had distinct projects establishing self goverment institutions in the regions.

The head of the project was Avetis Shahinyan. Self goverment institutions were founded in Armenia one year after the declaration of Armenia as an indipentant state.

[29] Նույն տեղում, ֆ. 404, ց. 1, գ. 44, թթ. 5-6: